## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 44

## ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12.2018Թ. ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Այգեստան համայնքի ավագանու 16.11.2018թ. թիվ 39-Ն որոշման վերանայում:
2. Այգեստան համայնքի ավագանու 16.11.2018թ. թիվ 40-Ն որոշման վերանայում:
3. Համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխության կատարում:
4. <<Այգեստանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատանքները ժամանակավորապես դադարեցնելու մասին:
5. Այգեստան համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծի քննարկում:
6. Ամենամյա գույքագրման արդյունքների հաստատում:
7. Գույքահարկի արտոնություն տալու մասին:
8. <<Այգեստանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի հաշվետվությունը 2018 թվականի ընթացքում մանկապարտեզի գործունեության վերաբերյալ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 45-Ն

## ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.11.2018Թ. ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Արարատի մարզպետի գրությունը Այգեստան համայնքի ավագանու 16.11.2018թ. թիվ 39-Ն որոշումը վերանայելու մասին

Վերանայել Այգեստան համայնքի ավագանու 16.11.2018թ. <<Այգեստան համայնքի տարածքում 2019թ. համար տեղական տուրքերի և վճարների սահմանում>> թիվ 39-Ն որոշումը, որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:/հավելված 1/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46-Ն

## ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.11.2018Թ. ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Արարատի մարզպետի գրությունը Այգեստան համայնքի ավագանու 16.11.2018թ. թիվ 40-Ն որոշումը վերանայելու մասին

Այգեստան համայնքի ավագանու 16.11.2018թ. <<Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 40-Ն որոշումը համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն որոշմանը, որոշման N2 և N3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար` ՄՈՒԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 47

## ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

Թույլատրել համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը

1. Վ/ք 10.07.01.54 (սոց. անապահով անձանց աջակցություն ) ծրագրի 4729 հոդվածից 550.0 հազ, 4726 հոդվածից 170.0 հազ., 08.02.04.51 (մշակութային միջոցառումների իրականացում ) ծրագրի 4111 հոդվածից 141.0 հազ., 04.05.01.59 (փողոցների պահպանում և շահագործում )ծրագրի 4241հոդվածից 200.0 հազ., 01.01.01.51(կառավարման մարմնի պահպանում )ծրագրի 4212 հոդվածից 316.0 հազ., 4214 հոդվածից 162.0 հազ.4111 հոդվածից 299.0 հազ., 4235 հոդվածից 166.0հազ., 4234 հոդվածից 45.0 հազ, 4252 հոդվածից 100.0 հազ դրամ, ընդամենը 2149.0 հազ դրամ պակասեցնել և ավելացնել 09.01.01.51 (նախադպրոցական ուսուցում )ծրագրի 4239 հոդվածին: 2. 01.01.01.51(կառավարման մարմնի պահպանում )ծրագրի 4269 հոդվածից պակասեցնել 100.0 հազ. դրամ և ավելացնել 07.02.01.55(մասնագիտական բժշկական ծառայություն )ծրագրի 4729 հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 48

### ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 15-րդ հետով, հաշվի առնելով, որ Այգեստան համայնքի բյուջեում չկա համապատասխան ֆինանսական միջոցներ մանկապարտեզի շենքի ջեռուցումը ձմռան ամիսներին ապահովելու, հետևաբար մանկապարտեզի գործունեությունը իրականացնելու համար

2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 1-ը դադարեցնել Այգեստան համայնքի <<Այգեստանի մանկապարտեզ>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 49

## ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Հաստատել Այգեստան համայնքի 2019 թվականի բյուջեն.

| | | |
|---|---|---|
| ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ | | |
| Եկամտատեսակները | հաշվեհամար | Հազ.դրամ |
| Ընդամենը եկամուտներ, այդ թվում | | 55703.4 |
| 1.Հարկեր և տուրքեր, այդ թվում | | 15816.8 |
| 1/1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում | | |
| Գույքահարկ շենքի և շինությունների, որից | | 450.0 |
| Ֆիզիկական անձանցից | 900415158196 | 450.0 |
| Իրավաբանական անձանցից | | |
| Հողի հարկ, այդ թվում՝ | | 10400.0 |
| Ֆիզիկական անձանցից | 900415158014 | 10400.0 |
| Իրավաբանական անձանցից | | |
| 1/2 Գույքահարկ փոխադրամիջոցներից | 900415158048 | 4700.0 |
| 1/3 Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում | | |
| Տեղական տուրքեր, որից՝ | | 266.8 |
| Շինությունների շինարարության թույլտվության համար, որից | | |
| Հիմնական շինությունների համար | | |
| Ոչ հիմնական շինությունների համար | | |
| Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն | | |

| | | |
|---|---|---|
| Շինությունների քանդման թույլտվություն | | |
| Ծխախոտի վաճառքի թույլտվություն | 900415158022 | 94.4 |
| Խմիչքների իրացման համար | 900415158154 | 94.4 |
| Բացօթյա վաճառքի համար | | |
| Վառելիքի վաճառքի համար | 900415000117 | 60.0 |
| Ժամը 24-ից հետո աշխատելու համար | | |
| Արտաքին գովազդի համար | | |
| Տաքսի ծառայության թույտվության համար | 900415158238 | 18.0 |
| 1/5 Այլ հարկային եկամուտներ /տույժեր և տուգանքներ/ | | |
| 2.Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | | |
| 2/5 Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/ | 900415158121 | 32509.6 |
| Այլ դոտացիա | 900415158162 | |
| Նպատակային հատկացումներ/Սուբվենցիա/ | | |
| 3. Այլ եկամուտներ, այդ թվում՝ | | 1777.0 |
| 3/2 Հողի օտարումից եկամուտներ | 900415158113 | |
| 3/3 Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝ | | |
| Հողերի վարձակալություն | 900415158097 | 1465.0 |
| Այլ գույքի վարձակալություն | 900415158089 | 312.0 |
| 3/4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում՝ | | |
| Պատվիրակված լիազորություններ | | |
| 3/5 Վարչական գանձումներ, այդ թվում՝ | | |
| Տեղական վճարներ | | 5600.0 |
| Շենքերի օրինականացման վճարներ | | |
| Ծնողական վճար | 900415158105 | 4000.0 |
| Ոռոգման ջրի մատակարարում | 900415003574 | 450.0 |
| Աղբահանության աշխատանքներ | 900415000042 | 950.0 |
| 3/6 Մուտքեր տույժերից տուգանքներից, այդ թվում՝ | | |
| 3/7 Համ.սպ.անասնաբույժի ծառայությունների վճար | | 200.0 |
| Վարչական իրավախախտումների համար | | |
| 4. Վարչական բյուջեի մնացորդ, որն ուղղվում է նախորդ տարիների պարտքերի մարմանը | | |

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Հազ.դրամ

| | | |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձ | 23738,0 |
| 4112 | պարգևատրում | 600,0 |
| 4212 | էներգետիկ ծառայ. | 1200,0 |
| 4213 | աղբահանում, դեռ. | 1240,8 |
| 4214 | կապի ծառայ. | 156,0 |
| 4221 | ներք.գործուղում | 30,0 |
| 4232 | համակարգչ ծառ | 450,0 |
| 4234 | տեղեկատվ.ծառ. | 300,0 |
| 4235 | կառավարչ.ծառ. | 100,0 |
| 4239 | ընդ.բնույթի ծառ. | 21900,0 |
| 4241 | մասնագիտ.ծառայ | 318,0 |
| 4261 | գրասենյակ.բնույթի. | 200,0 |
| 4264 | վառելիք, տրանսպ. | 1440,0 |
| 4269 | հատուկ նպա.նյութ | 400,0 |
| 4726 | հուղարկավ.նպաստ | 800,0 |
| 4729 | այլ նպաստ | 2200,0 |
| 4819 | հաս.կազմ.աջակց. | 200,0 |
| 4891 | վարչ.բյ. պ/ֆ | 430,6 |
| Ընդ. | | 55703,4 |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԻՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04201129

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratayg estan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 50

### ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով

Հաստատել Այգեստան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար՝ ՍՈՒՔՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 51

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով

1) Ազատել Վարդիթեր Մելիքսեթյանին՝ իրեն պատկանող հասարակական շինության 82000 դրամ գույքահարկի մուծումից:

2) Ազատել Մանվել Հովհաննիսյանին իրեն պատկանող, Այգեստան համայնքի Ստեփանյան փ.21 հասցեում գտնվող բնակելի տան գույքահարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկված տույժի 26300 /քսանվեց հազար երեք հարյուր/ դրամ մուծումից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված 1

Այգեստան համայնքի ավագանու

16.11.2018թ. թիվ 39 -Ն որոշման

## ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| I | Տեղական տուրքի անվանումը | Դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | *հիմնական օբյեկտների համար* | |
| ա | մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 4500 |
| բ | *սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար, այդ թվում՝* | |
| 1) | 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 9000 |
| 2) | 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 15000 |
| 3) | 1001-ից մինչև 3000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 15000 |
| | *ոչ հիմնական շինությունների տեղադրման համար* | |
| գ | մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 900 |
| դ | 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 1500 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| ա | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 900 |
| բ | բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում են նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխման մասով | |



| | | |
|---|---|---|
| գ | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը | |

| | | |
|---|---|---|
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 1500 |
| 4 | հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և(կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 60000 |
| 5 | խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է | 18000 |
| 6. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| 1) | ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| ա | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 2500 |
| բ | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 3000 |
| գ | 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 3900 |
| դ | 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 6300 |
| ե | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7800 |
| զ | 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 13800 |
| 2) | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| ա | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 2500 |
| բ | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 3000 |
| գ | 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 3900 |
| դ | 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 6300 |
| ե | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7800 |
| զ | 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 13800 |
| 7. | Համայնքի տարածքում | |
| | բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար | 105 |
| 8. | Համայնքի տարածքում ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել | |

| | | |
|---|---|---|
| ա | առևտրի օբյեկտների համար | 7500 |
| բ | հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համար | 15000 |
| գ | խաղատների համար | 150000 |
| դ | շահումով խաղերի համար | 75000 |
| ե | վիճակախաղերի համար | 30000 |
| 9 | համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | |
| | հիմնական շինությունների ներսում | |
| ա | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1500 |
| բ | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 2100 |
| գ | 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 3300 |
| դ | 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4800 |
| ե | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 6300 |
| զ | 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 9300 |
| | ոչ հիմնական շինությունների ներսում | |
| ա | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 300 |
| բ | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 600 |
| գ | 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 900 |
| դ | 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1500 |
| ե | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 3000 |
| զ | 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4800 |

| | | |
|---|---|---|
| 10. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է. | |
| ա | այլ արտաքին գովազդի համար | 450 |
| բ | դատարկ գովազդային վահանակների համար | 113 |
| 11. | Այգեստան համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել | 30000 |
| 12. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանել | 3000 |
| II | *Այգեստան համայնքի տարածքում 2019 թվականի ընթացքում տեղական վճարների դրույքաչափերը.* | |
| 1) | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար | 5000 |
| 2) | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար | 2000 |
| 3) | Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | 500 |
| 4) | Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար | |
| ա | ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և(կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար | 50 |
| բ | իրավաբանական անձանց համար աղբահանության սակագին սահմանել՝ | |
| | առևտրի և բնակչության սպասարկման այլ ծառայություն մատուցող գործառութային նշանակության օբյեկտների համար՝ | 1 քմ-ի համար 50 դրամ |
| | կրթական, առողջապահն հաստատությունների համար՝ | 1 քմ-ի համար 3 դրամ |
| | արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ | 1 քմ-ի համար 5 դրամ |
| 5) | Համայնքի վարչական տարածքում անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար սահմանել դրույքաչափեր՝ | |
| ա | Խոշոր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան | 800 դրամ |
| բ | Մանր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան | 100 դրամ |
| գ | խոզի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան | 200 դրամ |
| դ | յուրաքանչյուր թռչնի համար՝ տարեկան | 50 դրամ |

| | | |
|---|---|---|
| ե | Ջիու յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան | 700 դրամ |
| 6) | Համայնքի մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար | |
| ա | Համայնքի բնակիչ մեկ երեխայի համար ամսական | 6000 դրամ |
| բ | Հարևան գյուղերի երեխաների համար ամսական | 8000 դրամ |

*Համայնքի ղեկավար* *Ս.Հովսեփյան*

Հավելված 2
Հաստատված է Այգեստան համայնքի
ավագանու 2018 թվականի նոյեմբերի
16-ի N 40 -Ն որոշմամբ

Այգեստան համայնքի ղեկավարի աշխատավարձը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 15
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | - | 220000 |
| *Հայեցողական պաշտոն* | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 150000 |
| *Համայնքային ծառայության պաշտոններ* | | |
| համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 175000 |
| համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 157000 |
| համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/, /3.1-2/ | 2 | 141000 |
| համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 105000 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | | |
|---|---|---|
| անասնաբույժ | 1 | 73000 |
| հարկահավաք | 1 | 78000 |

ՏԵԽ.ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

| | | |
|---|---|---|
| Համակարգչային օպերատոր | 1 | 85000 |
| հավաքարար | 1 | 80000 |

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| | | |
|---|---|---|
| մշակույթի տան տնօրեն | 1 | 90000 |
| գրադարանավար | 1 | 85000 |
| սպորտ մարզիչ | 1 | 78000 |
| հավաքարար | 1,2 | 80000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված 3

Այգեստան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 16-ի N 40-Ն որոշման

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՅԳԵՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| *Հաստիքի անվանումը* | *Հաստիքային միավորը* | *Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/* |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 150000 |
| հաշվապահ | 0.75 | 120000 |
| բուժքույր | 0.75 | 104000 |
| դաստիարակ | 3.36 | *140000* |
| երաժշտ.դաստիարակ | 0.75 | 146000 |
| դաստիարակի օգնական | 3 | 78000 |
| խոհարար | 1 | 102000 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 73000 |
| դռնապան | 1 | 78000 |
| լվացքարար-հավաքարար | 0.75 | 98000 |
| պահակ | 1 | 73000 |
| տնտեսվար | 0.75 | 104000 |

Համայնքի ղեկավար՝ ՄՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ